ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնքի բնակչության ընդհանուր ժողովի

15.07.2015թ.
գ. Այգեկ

Ժողովի նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ Մ. Աբրահամյան
քարտուղար՝ աշխատակազմի քարտուղար Գ. Սարգսյան
մասնակիցներ՝ մարզպետարանի ներկայացուցիչ՝ Արայիկ Հակոբյան,
համայնքի 27 բնակիչ:

Լսեցին – Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ղեկավարի 2015 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությունը՝ բյուջեի կատարողականի և կատարված աշխատանքների վերաբերյալ /զեկ. համայնքի ղեկավար՝ Վ. Աբրահամյան/:

Կից ներկայացվում է հաշվետվությունը:

Ժողովի նախագահ՝ Մ. Աբրահամյան

Ժողովի քարտուղար՝ Գ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի 2015 թվականի առաջին կիսամյակի բյուջեի կատարողականը՝

2015 թվականի համայնքի բյուջեի սեփական եկամուտները 2963,2 հազար դրամ է, որը հաշվետու ժամանակաշրջանի համար կազմում է 113,4 %:

ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

հազար դրամ

	Եկամուտների տեսակները	Տարեկան պլան	Հաշվետու ժամանակաշրջան		
			Հաշվարկային պլան	Փաստացի	Տոկոս
1	հողի հարկ	1851,7	770,0	817,3	106,1
2	գույքահարկ շենք.շինությունների	570,0	237,0	239,7	101,1
3	գույքահարկ փոխադրամիջոցների	2900,8	970,0	1248,5	128,7
4	տեղական տուրքեր	198,0	84,0	99,0	117,8
5	վարձակալական վճար	428,3	210,0	210,0	100,0
6	տեղական վճարներ	710,0	340,0	348,7	102,0
7	դոտացիա	20546,2	13273,1	13368,1	100,7
8	այլ ոչ հարկային եկամուտներ	2850,0	2850,0	2850,0	100,0
9	տարեսկզբի ազատ մնացորդ	1551,9	1551,9	1551,9	--
	ԸՆԴԱՄԵՆԸ	**37606,9**	**20286,0**	**20733,2**	**102,2**

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

հազար դրամ

	Ծախսերի տեսակները	Տարեկան պլան	Հաշվետու ժամանակաշրջան		
			Հաշվարկային պլան	Փաստացի	Տոկոս
1	կառավարման ապարատ	15921,9	9837,9	7603,4	77,3
2	նախադպրոցական կրթություն	9900,0	4700,0	4700,0	100,0
3	մշակույթի տներ, ակումբներ	3930,0	2580,0	2384,9	92,4
4	աղբահանություն	1584,0	782,0	660,0	84,4
5	սոց.ծրագրեր	350,0	200,0	190,0	95,0
6	գյուղատնտեսություն	2850,0	1536,0	1134,0	73,8
7	պահուստային ֆոնդ	3071,0	--	--	--
	ԸՆԴԱՄԵՆԸ	**37606,9**	**19635,9**	**16672,3**	**84,9**

2. 2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքները.

1. Հրավիրվել և անցկացվել է ավագանու 5 նիստ՝ 3 հերթական, 2 արտահերթ ավագանու կանոնակարգով սահմանված կարգով, որի ընթացքում ընդունվել է ավագանու 27 որոշում:
2. Ընդունվել է համայնքի ղեկավարի 13 որոշում, արձակվել՝ 11 կարգադրություն:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան և այլ կազմակերպություններ են ուղարկվել 106 գրություններ:
4. Բնակիչներին տրամադրվել են 260 տարբեր բնույթի տեղեկանքներ:
5. Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, քննության է առնվել նրանց առաջարկությունները, դիմումները, ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ դրանց լուծման ուղղությամբ:
6. Բյուջեի միջոցներով գնվել և մատուցվել են հետևյալ ապրանքներն ու ծառայությունները՝

   1) ձեռք են բերվել և լիցքավորվել կրակմարիչներ՝ 140 000 դրամ արժեքով,

   2) 100 000 դրամ գումար է տրամադրվել կարկտահարության դեմ պայքարող հիմնարկին,

   3) համայնքի միջնակարգ դպրոցին նվիրաբերվել է համակարգիչ իր սարքավորումներով՝ 196 000 դրամ արժողությամբ:

   Մշակութային ոլորտում՝

   4) ապրիլի 7-ի Մայրության և գեղեցկության տոնի առթիվ, չխախտելով ավանդույթը, համայնքի 127 կանանց՝ թոշակառու մայրերի, գյուղապետարանի, մանկապարտեզի, դպրոցի, մշակութային հիմնարկների, բուժկետի և փոստային բաժանմունքի աշխատողների համար 533 400 դրամով գնվել են նվերներ:

   5) համայնքի միջնակարգ դպրոցի թվով 13 շրջանավարտների համար գնվել են նվերներ՝ 58 500 դրամ արժեքով,

   6) գնվել են թատրոնի ներկայացման տոմսեր գյուղապետարանի և մանկապարտեզի 20 աշխատողների համար:
7. Այգեկ համայնքի 2015 թվականի բյուջեից տրամադրվել է դրամական օգնություն՝ ընդամենը 190 000 դրամ՝ համաձայն դիմումների:
8. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար գյուղապետարանի աշխատակիցների նկատմամբ կիրառվել է խրախուսում՝ ընդամենը՝ 390 000 դրամ:
9. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության Արմավիրի մարզային փրկարարական վարչության գրության համաձայն տրամադրվել է նյութական աջակցություն՝ 95 500 դրամ գումարով ձեռք բերված շինանյութ:

10. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և համայնքի ղեկավարի կողմից կնքված ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված բույսերի պաշտպանության միջոցառումների անվտանգության ոլորտում կատարվել են համապատասխան ծառայություններ՝ համաձայն պայմանագրի տեխնիկական բնութագրի, որով տեղադրվել են 3 ուղեփակոցներ, ստեղծվել և պահպանվում են ախտահանիչ գորգերը, որի համար գնվել են թեփ և ախտահանիչ նյութեր: Երկու հերթափոխով իրականացվում է պահակային ծառայություն:
11. Համայնքի մանկապարտեզին նվիրաբերվել է նոր գնված հեռուստացույց և DVD նվագարկիչ՝ 176 000 դրամ արժողությամբ:
12. Գյուղապետարանի կրտսեր պաշտոններ զբաղեցնող երկու համայնքային ծառայողներ գործուղվել են Արմավիրի մարզպետարան՝ մասնակցելու համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացներին:
13. Պարբերաբար 7 օրը մեկ իրականացվել է աղբահանություն:
14. Աշխատավարձի և պարտադիր սոց. վճարների գծով պարտքեր չկան:

Առաջնային հիմնախնդիրներից է՝

1. *Համայնքային ճանապարհների վերանորոգում:*
2. *Գերեզմանատան ցանկապատում:*
3. *Մշակույթի տան նոր դահլիճի կառուցում:*
4. *Փողոցների լուսավորության անցկացում:*

Այգեկ համայնքի ղեկավար՝ Վ. Աբրահամյան

2015 թվականի հուլիսի 15
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզ գ. Այգեկ